Արձանագրություն N 4

N ՀՀԱՄԱՇՏ-ԳՀԱՇՁԲ-18/6 ծածկագրով ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակի համայնքապետարան-ի կարիքների համար Աշտարակի քաղաքային զբոսայգու վերանորոգման շինարարական աշխատանքների ձեռքբերման ԳՀ ընթացակարգի հայտերի գնատատող հանձնաժողովի Հայտերի գնահատման նիստի

ք. Աշտարակ 15.06. 2018թ., ժամը՝ 12.00

Մասնակցում էին՝ Նախագահ՝ ԳՊ/ԳԱՊ Գ.Եղիազարյանը,ԳՊ/ԳԱ՝ Դ.Տիգրանյանը,ԳՊ/ԳԱ՝ Վ.Վարդանյանը, ԳՊ/ԲԱ՝Ա.Գրիգորյանը, ԳՊ/ԲԱ՝ Մ.Փարվանյանը:

Քարտուղար ԳՊ/ՄՀՄ՝ Հ. Հակոբյան

1.ՀՀ կառավարությանն առընթեր Պետական եկամուտների կոմիտե ներկայացված հարցման մասին

ՀՀ կառավարությանն առընթեր Պետական եկամուտների կոմիտեի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել է եզրակացություն

2. Գնանշման հարցման ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքների հաստատման մասին

Հիմք ընդունելով ՌԱԶՈՎԱԼՈ ՍՊԸ - ի, որպես առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերը, ինչպես նաև, ներառյալ կոմիտեի կողմից տրամադրված, որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ առկա են անհամապատասխանություններ: Մասնավորապես, կոմիտեի կողմից ներկայացված տեղեկատվությամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերասկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունները կազմում է 76398 ՀՀ դրամ:Հավելված5.2–ում ասնագետների հաստատած գրավոր համաձայնությունները՝ իրականացվելիք աշխատանքներում վերջիններիս ներգրավելու մասին: Հավելված 5.1-ում ներկայացված չեն պահանջվող էքսկավատորի փաստաթղթերը: Բացակայում է նաև հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրած նմանատիպ առնվազն մեկ պայմանագիրը:

Ելնելով վերոնշյալ թերությունների առկայությունից, հանձնաժողովի քարտուղարին առաջարկվում է համակարգի միջոցով ծանուցել առաջին տեղը զբաղեցրած մասնակցին, առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

3.Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման ժամանակացույցը հաստատելու մասին

Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել հունիսի 19-ին, ժամը 11.00-ին, ՀՀ Արագածոտնի մարզ, ք. Աշտարակ, Ն.Աշտարակեցու հրապարակ 7 հասցեում, N 21 սենյակում:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

Հանձնաժողովի անդամների անունները

Նախագահ՝ԳՊ /ԳԱՊ Գ.Եղիազարյան

- ԳՊ/ԳԱ՝ Դ.Տիգրանյան
- ԳՊ/ԳԱ՝ Վ. Վարդանյան
- ԳՊ/ԲԱ՝ Ա.Գրիգորյան
- ԳՊ/ԲԱ՝ Մ.Փարվանյան

Քարտուղար ԳՊ/ՄՀՄ՝ Հ. Հակոբյան

Արձանագրություն N 5

N ՀՀԱՄԱՇՏ-ԳՀԱՇՁԲ-18/6 ծածկագրով ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակի համայնքապետարան-ի կարիքների համար Աշտարակի քաղաքային զբոսայգու վերանորոգման շինարարական աշխատանքների ձեռքբերման ԳՀ ընթացակարգի հայտերի գնատատող հանձնաժողովի Հայտերի գնահատման նիստի

ք. Աշտարակ 19.06. 2018թ.

Ժամը՝ 11.00

Մասնակցում էին՝

Նախագահ՝ԳՊ /ԳԱՊ Գ.Եղիազարյան

- ԳՊ/ԳԱ՝ Դ.Տիգրանյան

- ԳՊ/ԳԱ՝ Վ. Վարդանյան

- ԳՊ/ԲԱ՝ Ա.Գրիգորյան

- ԳՊ/ԲԱ՝ Մ.Փարվանյան

Քարտուղար ԳՊ/ՄՀՄ՝ Հ. Հակոբյան

1. Ընդունել Ի գիտություն,որ

ՌԱԶՈՎԱԼՈ ՍՊԸ - ի, որպես առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերում, ինչպես նաև, ներառյալ կոմիտեի կողմից տրամադրված, որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերում առկա էին անհամապատասխանություններ հրավերի պահանջների նկատմամբ: Առաջին տեղ զբաղեցրած մասնակցին՝ ՌԱԶՈՎԱԼՈ ՍՊԸ - ին, առաջարկվել է մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

Առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝

1) շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար և առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից.

2) չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է և նույն նիստում հանձնաժողովը առաջին տեղը զբաղեցրած մասնակից է ճանաչում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին՝ կիրառելով N ՀՀԱՄԱՇՏ-ԳՀԱՇՁԲ-18/6 ծածկագրով հրավերի 1-ին մասի 7.13-ից 7.20-րդ կետերով սահմանված ընթացակարգը:

2. Գնանշման հարցման ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքների հաստատման մասին

Հիմք ընդունելով գնահատող հանձնաժողովի անդամների կողմից իրականացված գնահատման արդյունքները /ըստ գնահատման թերթիկների/ ՌԱԶՈՎԱԼՈ ՍՊԸ - ի համար՝

ա) ՀՀ կառավարությանն առընթեր Պետական եկամուտների կոմիտեից ստացված եզրակացությունը գնահատվել է անբավարար,

բ) Նախկինում կատարված նմանատիպ պայմանագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին գնահատվել է անբավարար,

գ) Տեխնիկական միջոցների համապատասխանությունը հրավերի պահանջներին գնահատվել է անբավարար,

դ) Աշխատանքային ռեսուրսների համապատասխանությունը հրավերի պահանջներին գնահատվել է անբավարար:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՌԱԶՈՎԱԼՈ ՍՊԸ –ն սահմանված ժամկետում չի շտկել անհամապատասխանությունները և ելնելով վերոգրյալից ՌԱԶՈՎԱԼՈ ՍՊԸ –ի հայտը մերժել:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

3. N ՀՀԱՄԱՇՏ-ԳՀԱՇՁԲ-18/6 ծածկագրով ընթացակարգի 1-ին և հաջորդաբար տեղեր զբաղեցնող մասնակիցների մասին

3.1 N ՀՀԱՄԱՇՏ-ԳՀԱՇՁԲ-18/6 ծածկագրով ընթացակարգի

Չափաբաժին 1

- 1-ին տեղ զբաղեցնող մասնակից է ճանաչվում Եղիսաբեթ Ալմազյան Սամվելի Ա/Ձ –ն,որպես բավարար գնահատված և նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից :
- 2-րդ տեղ զբաղեցնող մասնակից է ճանաչվում ՌԱԴԻԿ ՇԻՆ ՍՊԸ –ն

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0

4. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնելու և առաջին տեղ զբաղեցրած մասնակցին ծանուցելու մասին

4.1 Առաջին տեղ զբաղեցրած մասնակցի «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ հարցում ներկայացնել ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

4.2 Առաջին տեղ զբաղեցրած մասնակցին ուղարկել ծանուցում առաջարկելով հրավերով սահմանված ժամկետում (ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում) ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով սահմանված փաստաթղթերը:

5. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման ժամանակացույցը հաստատելու մասին

Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից եզրակացության տրամադրումից և առաջին տեղ զբաղեցնող մասնակցի կողմից որակավորման փաստաթղթերն ուղարկելուց հետո, ոչ ուշ, քան գնահատման թերթիկները հանձնաժողովի անդամներին տրամադրվելուն հաջորդող երրորդ աշխատանքային օրը:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

Հանձնաժողովի անդամների անունները

Նախագահ՝ԳՊ /ԳԱՊ Գ.Եղիազարյան

- ԳՊ/ԳԱ՝ Դ.Տիգրանյան
- ԳՊ/ԳԱ՝ Վ. Վարդանյան
- ԳՊ/ԲԱ՝ Ա.Գրիգորյան
- ԳՊ/ԲԱ՝ Մ.Փարվանյան

Քարտուղար ԳՊ/ՄՀՄ՝ Հ. Հակոբյան